ՏԵՂԵԿԱՆՔ
ՄԱԶԾ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԻՆԴԵՔՍՈՒՄ (ՄԶԻ) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏԿԵՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանը՝

- 85-րդ տեղում է 0.733 միավորով
- Նախորդ տարվա համեմատ բարելավել է դիրքը 2 տեղով, իսկ միավորը՝ 0.003-ով
- Ներառված է «Բարձր մարդկային զարգացմամբ» երկրների խմբում
- Տարածաշրջանային համատեքստում ընդգրկված է Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի խմբում

Մարդկային զարգացման ինդեքսը (ՄԶԻ)՝

- Հրապարակվում է ՄԱԶԾ կողմից 1990 թվականից
- Ներառում է 3 չափում և 4 ցուցիչ
- Գնահատվել է 188 երկիր. ըստ միավորների նվազման երկրները դասակարգվում են Շատ բարձր ՄԶ (49 երկիր), Բարձր ՄԶ (56 երկիր), Միջին ՄԶ (39 երկիր) և Ցածր ՄԶ (44 երկիր) խմբերում
- Համաշխարհային միջին միավորը 0.711 է և նախորդ տարվա համեմատ բարելավվել է 0.009 միավորով
- Յուրաքանչյուր չափման համար ՄԶԻ սահմանում է նվազագույն և առավելագույն արժեքներ, այսպես կոչված՝ նպատակակետեր, և մատնանշում, թե յուրաքանչյուր երկիր որքան հեռու է այդ նպատակակետերից՝ արտահայտված {0-1} միջակայքում ընկած թվով: ՄԶԻ-ն հաշվարկվում է որպես 3 չափումների նորմալացված ինդեքսների երկրաչափական միջին:



ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

1.1. Կյանքի սպասվող տևողությունը ծննդյան պահից տարիների թիվն է, որը նորածինը միջին հաշվով պետք է ապրի, պայմանով, որ մահացությունը յուրաքանչյուր տարիքում հավասար կլինի մահացության տվյալ ժամանակահատվածի մակարդակին: Որպես նվազագույն արժեք ընդունվում է 20, առավելագույն՝ 85 տարին:

2.1. Դպրոց հաճախելու տարիների միջին թիվը ցույց է տալիս 25 և բարձր տարիքի անձանց կրթության միջին տևողությունը՝ հաշվարկված հիմք ընդունելով կրթության յուրաքանչյուր փուլի պաշտոնական տևողությունը: Առավելագույն արժեք համարվում է 15 տարին:

2.2. Դպրոց հաճախելու սպասվող տարիները ցույց են տալիս, թե քանի տարի կարող է սովորել դպրոցական տարիքի երեխան, եթե ընդրկվածության ցուցանիշները պահպանվեն երեխայի կյանքի ընթացքում: Առավելագույն արժեք համարվում է 18 տարին: Կրթության ինդեքսը 2.1 և 2.2 ցուցիչների թվաբանական միջինն է:

3.1. Յուրաքանչյուր երկրի մեկ շնչին ընկնող համախառն ազգային եկամուտը բերված է PPP դոլարի 2011թ. PPP միջոցով: Որպես նվազագույն արժեք ընդունվում է 100$, որպես առավելագույն՝ 75000$:

ՄԱՐԴԿԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԻՆԴԵՔՍՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏԿԵՐԸ

Մարդկային զարգացման ինդեքսով Հայաստանի միավորը գերազանցում է աշխարհի միջինը, սակայն զիջում Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի միջինին

ԱՊՀ երկրների շարքում Հայաստանը զբաղեցնում է 6-րդ տեղը, իսկ հարևան երկրների շարքում՝ վերջին տեղը

Նախորդ տարվա համեմատ ՄԶԻ 3 ցուցիչների մասով գրանցվել է առաջընթաց՝

- **Ծննդյան պահից կյանքի սպասվող տևողությունն աճել են 0.1 տարով**
- **Դպրոց հաճախելու տարիների միջին թիվը աճել է 0.1 տարով**
- **Մեկ շնչին ընկնող համախառն ազգային եկամուտն աճել է 172 $-ով**

Դպրոց հաճախելու սպասվող տարիների ցուցանիշը պահպանվել է նույն մակարդակում՝ 12.3 տարի:





ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ ԵՎ ՀԱՐԵՎԱՆ ԵՐԿՐՆԵՐ

ՄԶԻ ՎԱՐԿԱՆԻՇ

ՄԶԻ ՄԻԱՎՈՐ



ՑՈՒՑԻՉ 1. ԿՅԱՆՔԻ ՍՊԱՍՎՈՂ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆ ԾՆՆԴՅԱՆ ՊԱՀԻՑ

ԱՊՀ երկրներ

Հարևան երկրներ



ՑՈՒՑԻՉ 2. ՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ԴՊՐՈՑ ՀԱՃԱԽԵԼՈՒ ՏԱՐԻՆԵՐԻ ՄԻՋԻՆ ԹԻՎ

ԱՊՀ երկրներ



Հարևան երկրներ



ՑՈՒՑԻՉ 3. ԴՊՐՈՑ ՀԱՃԱԽԵԼՈՒ ՏԱՐԻՆԵՐԻ ՍՊԱՍՎՈՂ ԹԻՎ

ԱՊՀ երկրներ



Հարևան երկրներ



ՑՈՒՑԻՉ 4. ՄԵԿ ՇՆՉԻՆ ԸՆԿՆՈՂ ՀԱՄԱԽԱՌՆ ԱԶԳԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏ (PPP$)

ԱՊՀ երկրներ

Հարևան երկրներ